

Կովկասյան բարոմետր 2010

Հետազոտության համառոտ նկարագրությունը

Կովկասյան բարոմետրը (նախկինում՝ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն) Եվրասիա համագործակցություն հիմնադրամի Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) ծրագրի տարածաշրջանային ամենամյա նախագծերից է, որի նպատակը հարավկովկասյան երկրներում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունն է: Արժանահավատ տվյալների միաժամանակյա հավաքագրումը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնային տնտեսություններում իրականացվում է 2004թ. ի վեր և շարունակական հնարավորություն է ընձեռում իրականացնելու նաև միջերկրային համեմատություններ՝ բացահայտելով տարածաշրջանի երկրներում դիտարկվող երկարաժամկետ միտումները: 2004թ. հարցումն անցկացվել է հարավկովկասյան երկրների միայն մայրաքաղաքներում, իսկ 2006թ.-ից ի վեր՝ հետազոտություններն ընդգրկում են ինչպես մայրաքաղաքները, այնպես էլ մյուս քաղաքային և գյուղական բնակավայրերը¹:

Հարցման գործիքը

Հարցաթերթը մշակվել է Հարավային Կովկասի երեք երկրների փորձագետներից կազմված աշխատանքային խմբերի կողմից և տարեցտարի վերանայվել է. ավելացվել են նոր հարցեր, բացառվել են որոշ, ոչ այնքան արդյունավետ հարցեր, փոխնիփոխ ներկայացվել կամ հանվել են որոշ հարցախմբեր: Հիմնական հարցաթերթը պարունակում է Հարավային Կովկասի երկրներում ժողովարդագրական, սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացումների վերաբերյալ մոտ 100 հարց: 2010 թվականի հարցաթերթը հարստացվել է սոցիալական ցանցերի և հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ հարցախմբերով:

Հարցման մեթոդաբանությունը

Բազմաստիճան ընտրանքի շրջանակ են ծառայել վերջին համազգային ընտրությունների ընտրացուցակները: Մայրաքաղաքում, բոլոր մարզերի քաղաքային ու գյուղական վայրերում տնային տնտեսությունների քանակի համամասնություններով պատահականորեն ընտրվել են ընտրատեղամասերը, հաշվարկվել է յուրաքանչյուր տեղամասում հարցման ենթակա տնային տնտեսությունների թիվը: Վերջիններս որոշարկվել են սիստեմատիկ քայլի մեթոդով՝ որպես ելակետ ընդունելով ընտրատեղամասի մուտքը: Հարցվողների ընտրության համար կիրառվել է Քիշի աղյուսակը: Հայաստանում դեմառդեն հարցազրույցներին 2010թ. մասնակցել են մոտ 2000 տնային տնտեսությունների չափահաս անդամներ:

Տվյալների հասանելիությունը

Հարցաթերթը, ցուցադրաքարտերը, ընտրանքի մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը, հավաքագրված տվյալների բազան (SPSS ֆորմատով) և որոշ արդյունքներ տեղակայված են ՀՌԿԿ տարածաշրջանային վեբ-կայքում՝ www.crrccenters.org հասցեով: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմե՛ք ՀՌԿԿ-Հայաստան:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է՝ հիմնադրված 2003թ. Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունները խթանելու նպատակով: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և տեղական համալսարանների գործակցությամբ հիմնված ծրագիրը գիտնականներին և քաղաքական գործիչներին առաջարկում է համատեղ հետազոտությունների, դասընթացների և տարածաշրջանային համագործակցության բազմաթիվ հնարավորություններ:

ՀՌԿԿ ծրագրերի վերաբերյալ տեղեկությունների համար դիմե՛ք ՀՌԿԿ-Հայաստան:

ՀՌԿԿ-Հայաստան՝
Երևան 0025,
Աբովյան 52, 3-րդ հարկ,
հեռ./ֆաքս՝ 581330, 581450,
Էլ. փոստ՝ crrcc@crrcc.am,
վեբ-կայք՝ www.crrcc.am:

¹ Հարցումներ չեն անցկացվել Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, Աբխազիայում և Հարավային Օսեթիայում: